ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2022

02.2022

03.2022

04.2022

05.2022

06.2022

07.2022

08.2022

09.2022
Սեպտեմբեր

10.2022

11.2022

12.2022

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 30-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2022

Սեպտեմբեր

թիվ 9 (289)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Կապիտալ Թրեյդեր» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԹԻՄ ՓԵՅ» ՓԲԸ ՎԿ ՀԱԹ (Հարավարևմտյան թաղամաս), «Տիգրան Մեծ», «Կոմիտաս», «Ազատություն», «Ավան», «Աբովյան 2», «Սևան», «Վանաձոր 1», «Գյումրի», «Արտաշատ» և «Էջմիածին» մասնաճյուղերը հաշվառելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԱԼԵՔՍԱՐՍ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ «ՄԱՇՏՈՑ» մասնաճյուղը գրանցելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 156Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 147-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 148-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 365-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 158-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 159-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

18 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Կապիտալ Թրեյդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 149Ա):
- ***Հաշվառվել են*** «ԹԻՄ ՓԵՅ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության ՀԱԹ (Հարավ-արևմտյան թաղամաս), «Տիգրան Մեծ», «Կոմիտաս», «Ազատություն», «Ավան», «Աբովյան 2», «Սևան», «Վանաձոր 1», «Գյումրի», «Արտաշատ» և «Էջմիածին» մասնաճյուղերը (որոշում թիվ 151Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԱԼԵՔՍԱՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 153Ա):
- ***Գրանցվել է*** «ԱՅՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «ՄԱՇՏՈՑ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/484Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022 թ. սեպտեմբերի 13-ի թիվ 156Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 11.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 8.5%:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպելու Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը, իրականացնելու Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում տեխնիկական միջոցներով դրամանիշերի տարբեր պաշտպանական հատկանիշների ստուգման հիման վրա կանխիկ դրամի վերահաշվումը և տեսակավորումը, նվազեցնելու հաճախորդների դրամարկղային սպասարկման ոլորտում առկա ռիսկերը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի ««Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կանոնը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.10-րդ կետով.

«2.10. Բանկի դրամարկղային կենտրոն՝ առևտրային բանկի գլխամասում կամ մասնաճյուղերում գտնվող դրամարկղային հանգույց, որը հագեցած է կանխիկ դրամի վերահաշվման, տեսակավորման, ստուգման, փաթեթավորման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և ունի ինկասացիոն մեքենաների սպասարկման համար բավարար պայմաններ:»:

2) Կանոնակարգի 17-րդ կանոնը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.3-17.11-րդ կետերով.

«17.3. Կենտրոնական բանկը բանկերի դրամարկղային սպասարկումն իրականացնում է միայն բանկերի դրամարկղային կենտրոնների միջոցով: Բանկերի դրամարկղային կենտրոններում ստացված բոլոր թղթադրամները և մետաղադրամները ենթակա են ստուգման ու տեսակավորման դրամանիշեր հաշվող սարքավորումների միջոցով:

17.4. Բանկերի դրամարկղային կենտրոններում թղթադրամների հաշվման, տեսակավորման համար կիրառվող մեքենաները պետք է ունենան հաշված և տեսակավորած թղթադրամների վերաբերյալ հաշվետվություններ ստանալու/տրամադրելու և արտահանելու հնարավորություն:

17.5. Բանկերի դրամարկղային կենտրոններում թղթադրամների հաշվման, տեսակավորման համար կիրառվող մեքենաները պետք է ապահովեն թղթադրամների վճարունակության նվազագույն պահանջների հետևյալ ստուգումները (և դիմերեսի, և դարձերեսի համար).

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. սեպտեմբերի 6-ին (ՀՀԳՏ, 14.09. 2022):

1) Թղթադրամների տեսանելի պատկերի և չափերի համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին,

2) Ուլտրամանուշակագույն լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,

3) Ինֆրակարմիր լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,

4) Մագնիսականություն:

17.6. Բանկերի դրամարկղային կենտրոններում մետաղադրամների հաշվման, տեսակավորման համար կիրառվող մեքենաները պետք է ապահովեն մետաղադրամների վճարունակության նվազագույն պահանջների հետևյալ ստուգումները.

1) Մետաղադրամների չափերի (տրամագիծ և հաստություն) համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին,

2) Համաձուլվածքի ստուգում (մագնիսականություն, էլեկտրահաղորդականություն):

17.7. Բանկերը դրամանիշեր հաշվող մեքենաներ ընտրելու համար կարող են առաջնորդվել Եվրոպական կենտրոնական բանկի կողմից թեստավորման դրական արդյունքներ ապահովված մեքենաների ցանկից (https://www.ecb.europa.eu/euro/cashprof/cashhand/recycling/html/tested.en.html):

17.8. Բանկերի դրամարկղային կենտրոնում (կենտրոններում) կիրառվող թղթադրամներ հաշվող, տեսակավորող մեքենաները պետք է ունենան դրամանիշերն առանձնացնող նվազագույնը 5 գրպան:

17.9. Կենտրոնական բանկին հանձնվող կանխիկ դրամը բանկերը պետք է ստուգեն բանկի դրամարկղային կենտրոններում կիրառվող դրամանիշեր հաշվող մեքենաներով և սույն կանոնակարգով սահմանված կարգով փաթեթավորվեն բանկի դրամարկղային կենտրոններում աշխատող գանձապահների կողմից:

17.10. Սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող փաթեթավորմամբ կամ անընթեռնելի վրադիրներով կամ պիտակներով դրամանիշերի կապոցները (պարկերը) Կենտրոնական բանկում դրամանիշերի ստուգման ընթացքում դիտարկվում են որպես հաշվեսխալ և Կենտրոնական բանկի կողմից առանց վերահաշվելու հետ են վերադարձվում Բանկին՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

17.11. Բանկոմատների լիցքավորման համար բանկերը պետք է օգտագործեն իրենց դրամարկղային կենտրոններում կիրառվող դրամանիշեր հաշվող մեքենաներով ստուգված դրամանիշերը, ինչպես նաև Կենտրոնական բանկից ստացված դրամանիշերը (բացառություն են համարվում հաճախորդների կողմից վերաշրջանառության հնարավորությամբ բանկոմատներ մուտքագրվող դրամանիշերը, որոնք ստուգվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշմամբ սահմանված կարգով):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մարտի 31-ից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով 17-րդ կանոնում լրացվող 17.11-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

13 սեպտեմբերի 2022 թ., N 147-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 365-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի մեթոդաբանությունը համապատասխանեցնելու ապահովագրական ընկերությունների համար սահմանված կապիտալի համարժեքության նորմատիվի փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 158-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՌԱՄԵԼՍ) հաշվարկման մեթոդաբանությունը» կանոնակարգ 3/08-ը հաստատելու մասին» թիվ 365-Ն որոշմամբ հաստատված ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՌԱՄԵԼՍ) հաշվարկման մեթոդաբանությունը» կանոնակարգ 3/08-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի Հավելված 1-ի աղյուսակի «Ք1» տողի «Հարաբերակցության սահմանումը» սյունակում «վճարունակության պահանջվող մեծություն+ռիսկով կշռված ակտիվներ» բառերը փոխարինել «պահանջվող կապիտալ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

13 սեպտեմբերի 2022 թ., N 148-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. սեպտեմբերի 6-ին (ՀՀԳՏ, 14.09. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով բանկերի կողմից արտարժութային ռիսկի կառավարման մոտեցումները համապատասխանեցնելու միջազգային ստանդարտներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգի 11-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) արտարժույթի տնօրինման նորմատիվները.

ա. յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվ,

բ. բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվ:»:

2) Կանոնակարգի 24.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24.2. Արտարժույթի տնօրինման նորմատիվները հաշվարկվում են սույն Կանոնակարգի Գլուխ 6.1-ի համաձայն, և սահմանվում է.

1) առավելագույնը 7%՝ յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվի համար,

2) առավելագույնը 10%՝ բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվի համար:»:

3) Կանոնակարգի 25-րդ կետի 4-րդ ենթակետում «նորմատիվը» բառը փոխարինել «նորմատիվները» բառով:

4) Կանոնակարգի 56.1-56.4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

5) Կանոնակարգի 57-րդ կետում «այլ արտարժույթները» բառերը փոխարինել «այլ արժույթները» բառերով:

6) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ Գլուխ 6.1-ով.

«ԳԼՈՒԽ 6.1.

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԸ

79. Յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. սեպտեմբերի 23-ին (ՀՀԳՏ, 27.09. 2022):

$$Դ_Ա = \frac{Ա_բ}{Կ_{ընդ}} * 100\%,$$

որտեղ՝

$Դ_Ա$ *– բանկի յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվն է՝ հաշվետու օրվա դրությամբ,*

$Ա_բ$ *– բանկի արտարժութային բաց դիրքն է՝ բացարձակ մեծությամբ հաշվետու օրվա դրությամբ՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով,*

Կընդ - բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալն է՝ արտարժույթի դիրքի նորմատիվի հաշվարկման օրվա դրությամբ:

80. Բոլոր արտարժույթների գծով նորմատիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Դ_Հ = \frac{\max(Ե_բ, Կ_բ)}{Կ_{ընդ}} * 100\%,$$

որտեղ՝

$Դ_Հ$ *– բանկի բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվն է՝ հաշվետու օրվա դրությամբ,*

$Ե_բ$ *– բանկի արտարժութային երկար դիրքերի հանրագումարն է՝ հաշվետու օրվա դրությամբ՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով,*

$Կ_բ$ *– բանկի արտարժութային կարճ դիրքերի հանրագումարն է՝ բացարձակ մեծությամբ հաշվետու օրվա դրությամբ՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով,*

Կընդ – բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալն է՝ արտարժութային դիրքի նորմատիվի հաշվարկման օրվա դրությամբ:

81. Սույն Կանոնակարգի 79-րդ և 80-րդ կետերում նշված արտարժույթի բաց, երկար և կարճ դիրքերը սահմանված են սույն Կանոնակարգի Հավելված 4-ի 6.3-րդ կետով:

82. Արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են.

1) տվյալ արտարժույթով ակտիվները և պարտավորությունները,
2) տվյալ արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվները և պարտավորությունները,
3) տվյալ արտարժույթով ածանցյալ գործիքները՝ ապագայում գնվող արտարժույթը ներառվում է ակտիվային հոդվածների հաշվարկում, ապագայում վաճառվող արտարժույթը՝ պարտավորությունների հաշվարկում:

83. Արտարժութային դիրքի հաշվարկում սույն Կանոնակարգի 82-րդ կետով սահմանված ակտիվներն ընդգրկելիս՝

1) ստանդարտ և հսկվող դասակարգված ակտիվները (ոչ ռիսկային և ռիսկային դասակարգված արժեթղթերը) ներառվում են համախառն հաշվեկշռային արժեքով,
2) ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված ակտիվները (միջին ռիսկային և բարձր ռիսկային դասակարգված արժեթղթերը)՝ հաշվեկշռային արժեքով, բացառությամբ սույն կետի 3-րդ կետով սահմանված դեպքերի և հաշվի առնելով սույն կետի 4-րդ ենթակետի պահանջները,
3) բացառապես բանկի դատողությունների և մասնագիտական կարծիքի հիման վրա սուբյեկտիվ չափանիշով դասակարգված (այդ թվում՝ անհուսալի) ակտիվները արտարժութային դիրքի հաշվարկում ընդգրկվում են այն ակտիվների դասակարգման դասին՝ սույն կետով սահմանված պահանջների համապատասխան, որով կընդգրկվեին օբյեկտիվ չափանիշով դասակարգված լինելու դեպքում,
4) ակտիվների դասակարգման և պահուստավորման կարգի 46-րդ կետի համաձայն՝ բանկի կողմից հնարավոր կորուստների պահուստին կատարված ավելացված հատկացումները, ինչպես նաև ակտիվների գծով լրացուցիչ պահուստին կատարվող հատկացումները հաշվի չեն առնվում:

84. Սույն Կանոնակարգի իմաստով՝ դրամային ակտիվները կամ պարտավորությունները արտարժութային ռիսկ են պարունակում, եթե դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարների մեծությունները հաշվարկվում են արտարժույթի և/կամ արժութային զամբյուղի՝ դրամի նկատմամբ փոխարժեքի միջոցով և, հետևաբար, կարող են տատանվել վերջինիս փոփոխությամբ պայմանավորված:

85. Արտարժույթի տնօրինման նորմատիվների հաշվարկման իմաստով՝ արտարժութային ակտիվ կամ պարտավորություն են համարվում նաև.

1) թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորները, դրանցով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները.
2) անկանխիկ մետաղական հաշիվները:

86. Արտարժույթի տնօրինման նորմատիվների հաշվարկման իմաստով՝ բանկային ոսկին, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, որոնց հարգը փոքր չէ 999-ից, դրանցով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները և անկանխիկ ոսկու հաշիվները դիտվում են որպես արտարժույթի մեկ տեսակ:

87. Եթե ակտիվը կամ պարտավորությունը կցված է որևէ արժութային զամբյուղի (բացառությամբ՝ ՍԴՌ-ի), ապա տվյալ զամբյուղի մեջ մտնող արտարժույթները մասնակցում են համապատասխան արտարժութային դիրքերի հաշվարկին տվյալ զամբյուղի կառուցվածքում իրենց տեսակարար կշռին համապատասխան:»:

2. Կանոնակարգի Հավելված 4-ի 6.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.4. Արտարժութային առավելագույն դիրքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԱԴ_{ա} = \max(Ե_{բ}, Կ_{բ}),$$

որտեղ՝

$ԱԴ_{ա}$ – *բանկի արտարժութային առավելագույն դիրքն է,*

$Ե_{բ}$ – *բանկի արտարժութային երկար դիրքերի հանրագումարն է՝ հաշվետու օրվա դրությամբ՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով,*

$Կ_{բ}$ – *բանկի արտարժութային կարճ դիրքերի հանրագումարն է՝ բացարձակ մեծությամբ հաշվետու օրվա դրությամբ՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:»:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկուշաբթի օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

26 սեպտեմբերի 2022 թ., N 158-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ հաշվետվությունը համապատասխանեցնելու նորմատիվային դաշտում իրականացված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետև՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Թիվ 7 հաշվետվությունը բաղկացած է 3 էջից:

Հաշվետվությունում հաշվեկշռային արտարժութային հոդվածները և արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածներն ընդգրկվում են Կանոնակարգ 2-ի 83-րդ կետի պահանջներին համապատասխան:

1) Հաշվետվության առաջին էջում լրացվում են Աղյուսակ 1-ը և Աղյուսակ 2-ը:

Աղյուսակ 1-ում ներկայացվում է բանկի բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվի հաշվարկը՝ Կանոնակարգ 2-ով սահմանված կարգով: Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ սկզբունքների համաձայն՝

ա. «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» սյունակի *«I արտարժութային խմբի առավելագույն դիրք»* և *«II արտարժութային խմբի առավելագույն դիրք»* ենթասյունակներում լրացվում են արտարժութային առավելագույն դիրքերն՝ ըստ արտարժութային խմբերի՝ հիմք ընդունելով Կանոնակարգ 2-ի 6.1-րդ գլուխը և տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքը,

բ. *«Արտարժութային առավելագույն դիրք»* ենթասյունակում լրացվում է արտարժութային առավելագույն դիրքը՝ բոլոր արտարժույթների գծով՝ հիմք ընդունելով Կանոնակարգ 2-ի 6.1-րդ գլուխը և տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքը,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. սեպտեմբերի 23-ին (ՀՀԳՏ, 27.09. 2022):

գ. *«Բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվի սահմանաչափը»* սյունակում լրացվում է Կանոնակարգ 2-ով սահմանված՝ բանկի տվյալ օրվա ընդհանուր կապիտալի և Կանոնակարգ 2-ի 24.2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված առավելագույն սահմանաչափի արտադրյալը,

դ. *«Տարբերությունը (+/-)»* սյունակում լրացվում է «Արտարժութային առավելագույն դիրք» և «Բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվի սահմանաչափը» սյունակների տարբերությունը, ընդ որում արտարժութային կարճ դիրքի դեպքում «Արտարժութային առավելագույն դիրք» սյունակում լրացվող մեծությունը հաշվարկում ներառվում է բացարձակ արժեքով: Սյունակում լրացվող մեծությունը բացասական լինելու դեպքում ներկայացվում է «-» նշանով:

Աղյուսակ 2-ը լրացվում է Աղյուսակ 1-ի լրացման սկզբունքների համաձայն՝ միայն հաշվեկշռում հաշվառվող արտարժութային ակտիվների, պարտավորությունների, արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների գծով:

2) Հաշվետվության երկրորդ էջում լրացվում են Աղյուսակ 3-ը և Աղյուսակ 4-ը:

Աղյուսակ 3-ում ներկայացվում է բանկի յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվի հաշվարկը՝ Կանոնակարգ 2-ով սահմանված կարգով: Աղյուսակ 3-ը լրացվում է հետևյալ սկզբունքների համաձայն՝

ա. «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» տողերում լրացվում է յուրաքանչյուր արտարժույթի գծով բաց դիրքը՝ հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքը: Այն դեպքում, երբ առանձին արտարժույթի գծով բանկն ունի կարճ դիրք, «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» տողում նշված մեծությունը լրացվում է «-» նշանով:

բ. *«Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը»* տողերում լրացվում է Կանոնակարգ 2-ով սահմանված՝ բանկի տվյալ օրվա ընդհանուր կապիտալի և Կանոնակարգ 2-ի 24.2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված առավելագույն սահմանաչափի արտադրյալը:

գ. *«Տարբերությունը (+/-)»* տողերում լրացվում է «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» և «Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը» տողերի տարբերությունը, ընդ որում, արտարժութային կարճ դիրքի դեպքում «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» տողում լրացվող մեծությունը հաշվարկում ներառվում է բացարձակ արժեքով: Տողում լրացվող մեծությունը բացասական լինելու դեպքում ներկայացվում է «-» նշանով:

դ. Եթե բանկն ունի բաց դիրք այնպիսի արտարժույթով, որը նշված չէ հաշվետվության երկրորդ էջում, ապա այդ արտարժույթի անվանումը նշվում է 3-րդ և 4-րդ աղյուսակների «Այլ արտարժույթ» սյունակում՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի: Եթե բանկն ունի այնպիսի արտարժույթով արտահայտված միջոցներ, որոնք պետք է ցույց տրվեն «Այլ արտարժույթ» սյունակում, ապա պետք է հիմք ընդունել տվյալ պետության՝ Կենտրոնական բանկի կողմից հաստատված արտարժույթ/ԱՄՆ դոլար և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հաստատված ԱՄՆ դոլար/Հայաստանի Հանրապետության դրամ հաշվարկային փոխարժեքները:

ե. Բանկային ոսկին, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, որոնց հարգը փոքր չէ 999-ից, դրանցով արտահայտված պահանջները և պարտավորությունները և ոսկով առարկայազուրկ մետաղական հաշիվները ներկայացվում են որպես մեկ արժույթ՝ «Այլ արտարժույթ» սյունակում լրացնելով ոսկու ISO (ԻՍՕ) 4217 կոդը: Սույն պարբերությամբ նախատեսված սկզբունքը կիրառվում է նաև այլ մետաղների դեպքում:

Հաշվետվության Աղյուսակ 4-ը լրացվում է Աղյուսակ 3-ի լրացման սկզբունքների համաձայն՝ միայն հաշվեկշռում հաշվառվող արտարժութային ակտիվների, պարտավորությունների, արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների գծով:

3) Հաշվետվության երրորդ էջը լրացվում է այն արտարժույթների համար, որոնց գծով համախառն ակտիվները կամ համախառն պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գերազանցում են 500,000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք գումարը: Աղյուսակ 5-ը լրացվում է հետևյալ սկզբունքների համաձայն՝

ա. Բանկի ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների կազմը ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ հաշվարկված տվյալ օրվա Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

բ. Բանկային ոսկին, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, որոնց հարգը փոքր չէ 999-ից, դրանցով արտահայտված պահանջները և պարտավորությունները և ոսկով առարկայազուրկ մետաղական հաշիվները ներկայացվում են առանձին, ընդ որում, ոսկով առարկայազուրկ մետաղական հաշիվների համար «Այլ արտարժույթ» սյունակում լրացվում են «Ոսկու ISO (ԻՍՕ) 4217 կոդ – Մետաղական հաշիվ» բառերը: Սույն պարբերությամբ նախատեսված սկզբունքը կիրառվում է նաև այլ մետաղների դեպքում:

Ածանցյալ գործիքների վերաբերյալ տեղեկություններ լրացնելիս յուրաքանչյուր արտարժույթի գծով կնքված ածանցյալ գործարքները պետք է ներկայացվեն զուտ տեսքով: Օրինակ՝ եթե կնքվել է 50 ԱՄՆ դոլարի գնման և 100 ԱՄՆ դոլարի վաճառքի ֆորվարդ, ապա տվյալ տողում պետք արտացոլել (-50) ԱՄՆ դոլարը:»:

2) Կանոնակարգի Հավելված 2-ի Ձև թիվ 7 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկուշաբթի օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

26 սեպտեմբերի 2022 թ., N 159-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի

2022 թ. սեպտեմբերի 23-ի թիվ 159-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ

Ձև թիվ 7

(շաբաթական)

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____

Աղյուսակ 1 (Բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվի հաշվարկը)

(հազ. դրամ)

	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին			Բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվի սահմանաչափը	Տարբերությունը (+ / -) (4-5)
	I արտարժութային խմբի առավելագույն դիրք	II արտարժութային խմբի առավելագույն դիրք	Արտարժութային առավելագույն դիրք		
1	2	3	4	5	6
Երկուշաբթի					
Երեքշաբթի					
Չորեքշաբթի					
Հինգշաբթի					
Ուրբաթ					
Շաբաթ					
Կիրակի					

Աղյուսակ 2 (Հաշվեկշռում հաշվառվող արտարժութային ակտիվների, պարտավորությունների, արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների գծով առավելագույն դիրքը)

(հազ. դրամ)

	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին			Բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվի սահմանաչափը	Տարբերությունը (+ / -) (4-5)
	I արտարժութային խմբի առավելագույն դիրք	II արտարժութային խմբի առավելագույն դիրք	Արտարժութային առավելագույն դիրք		
1	2	3	4	5	6
Երկուշաբթի					
Երեքշաբթի					
Չորեքշաբթի					
Հինգշաբթի					
Ուրբաթ					
Շաբաթ					
Կիրակի					

Բանկի վարչության նախագահ՝ _____

(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ՝ _____

Աղյուսակ 3 (Յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվի հաշվարկ)

(հազ. դրամ)

	Արտարժույթ	USD	GBP	EUR	RUB	XDR	CAD	AUD	CHF	DKK	IRR	JPY	BGN	UAH	UZS	BYN	TJS	TMT	GEL	ARS	EGP	TRY	ILS	PLN	LBP	INR	HUF	NOK	SEK	CZK	CNY	SGD	KRW	BRL	MXN	SAR	SYP	AED	KWD	RON	ISK	KGS	KZT	MDL	Այլ արտարժույթ 1	Այլ արտարժույթ 2	Այլ արտարժույթ 3
Երկուշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Երեքշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Չորեքշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Հինգշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Ուրբաթ	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Շաբաթ	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Կիրակի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														

Աղյուսակ 4 (Հաշվեկշռում հաշվառվող արտարժութային ակտիվների, պարտավորությունների, արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների գծով առավելագույն դիրքը)

(հազ. դրամ)

	Արտարժույթ	USD	GBP	EUR	RUB	XDR	CAD	AUD	CHF	DKK	IRR	JPY	BGN	UAH	UZS	BYN	TJS	TMT	GEL	ARS	EGP	TRY	ILS	PLN	LBP	INR	HUF	NOK	SEK	CZK	CNY	SGD	KRW	BRL	MXN	SAR	SYP	AED	KWD	RON	ISK	KGS	KZT	MDL	Այլ արտարժույթ 1	Այլ արտարժույթ 2	Այլ արտարժույթ 3
Երկուշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Երեքշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Չորեքշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Հինգշաբթի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Ուրբաթ	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Շաբաթ	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														
Կիրակի	Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին																																														
	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը																																														
	Տարբերությունը (+ / -)																																														

Աղյուսակ 5 (Բանկի ակտիվների, պարտավորությունների-հեփհաշվեկշռային հոդվածների կազմը ըստ արտարժույթների)

(հազ. դրամ)

	Արտարժույթ	USD	GBP	EUR	RUB	XDR	CAD	AUD	CHF	DKK	IRR	JPY	BGN	UAH	UZS	BYN	TJS	TMT	GEL	ARS	EGP	TRY	ILS	PLN	LBP	INR	HUF	NOK	SEK	CZK	CNY	SGD	KRW	BRL	MXN	SAR	SYP	AED	KWD	RON	ISK	KGS	KZT	MDL	Բանկային ոսկի	Ոսկու սոսնձարարացված ձուլակտորներ	Արծաթե ընդհանուր ստանդարտացված ձուլամասրներ	Պլատինե ընդհանուր ստանդարտացված ձուլակտորներ	Պալադիումի բանկային ստանդարտացված ձուլակտորներ	Այլ արտարժույթ 1	Այլ արտարժույթ 2	Այլ արտարժույթ 3
1	Արտարժութային ակտիվներ																																																	
1.1	*այդ թվում՝ արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների*																																																
2	Արտարժութային պարտավորություններ																																																
2.1	*այդ թվում՝ արտարժութային ռիսկ պարունակող դրամային պարտավորություններ*																																																
3	Արտարժութային հետհաշվեկշռային հոդվածներ																																																

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 22
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 26
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 31
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 32
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 42
Տոկոսադրույքներ
Բանկային փոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 63
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 73
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 75
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 84
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2022 թ. օգոստոս*	*2022 թ. օգոստոսի իրական աճի փոփոխությունը 2021 թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*2022 թ. սեպտեմբեր*	*2022 թ. սեպտեմբերի իրական աճի փոփոխությունը 2021 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		18.5		14.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	235460.7[1]	23.3	235827.1	14.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	52542	16.3	57121.1	14.6
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	401321.2	20.0	411877.0	20.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	224274.8[1]	25.2[1]	237049.3	26.3
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	730.4	30.1	656.6	19.3
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	300340[1]	8.6[2]	293472[3]	6.1[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2022 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.6	0.9	0.8	4.0
Փետրվար	0.1	3.7	1.3	0.2
Մարտ	1.8	2.0	-0.8	-0.2
Ապրիլ	2.3	-2.4	0.5	-1.3
Մայիս	0.1	-3.1	1.0	-4.5
Հունիս	0.3	-2.9	0.1	-8.4
Հուլիս	-1.4	-4.3	-0.1	-10.3
Օգոստոս	0.2	-1.8	0.1	-15.4
Սեպտեմբեր	0.6	2.9	-0.2	-6.2
2022 թ. հունվար - սեպտեմբերը 2021 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ	8.6	4.1	7.2	14.0

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.4	2.2	1.6
Փետրվար	-0.2	0.6	0.1
Մարտ	0.5	1.0	1.8
Ապրիլ	0.9	1.3	2.3
Մայիս	-0.1	-0.4	0.1
Հունիս	-1.4	-0.8	0.3
Հուլիս	-2.1	-0.5	-1.4
Օգոստոս	-0.1	0.4	0.2
Սեպտեմբեր	-0.2	-0.1	0.6
Հոկտեմբեր	0.5	0.7	
Նոյեմբեր	1.3	1.7	
Դեկտեմբեր	3.4	1.6	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	4.5	7.1
Փետրվար	-0.5	5.3	6.5
Մարտ	-0.1	5.8	7.4
Ապրիլ	0.9	6.2	8.4
Մայիս	1.2	5.9	9.0
Հունիս	1.7	6.5	10.3
Հուլիս	1.5	8.2	9.3
Օգոստոս	1.8	8.8	9.1
Սեպտեմբեր	1.4	8.9	9.9
Հոկտեմբեր	1.3	9.1	
Նոյեմբեր	1.6	9.6	
Դեկտեմբեր	3.7	7.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	*2022 թ. սեպտեմբերը 2021 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
Գնաճ	**9.9**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	13.7	5.05
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.9	0.36
Հագուստ և կոշիկ	10.0	0.35
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	7.6	1.23
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	10.3	0.48
Առողջապահություն	2.3	0.20
Տրանսպորտ	9.4	0.92
Կապ	0.6	0.03
Հանգիստ և մշակույթ	15.5	0.28
Կրթություն	4.7	0.20
Ռեստորաններ և հյուրանոցներ	8.6	0.09
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	11.1	0.72

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.0	0.7	0.3
Փետրվար	0.1	0.8	0.6
Մարտ	0.0	0.8	1.1
Ապրիլ	0.5	0.6	1.3
Մայիս	0.0	0.4	0.7
Հունիս	-0.1	0.3	1.0
Հուլիս	-0.1	0.3	0.7
Օգոստոս	0.1	0.3	0.4
Սեպտեմբեր	0.3	0.3	0.7
Հոկտեմբեր	0.3	0.4	
Նոյեմբեր	0.3	0.6	
Դեկտեմբեր	0.9	0.5	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.4	3.0	5.8
Փետրվար	0.4	3.7	5.6
Մարտ	0.3	4.6	5.9
Ապրիլ	0.8	4.6	6.6
Մայիս	0.8	5.1	7.0
Հունիս	0.7	5.5	7.8
Հուլիս	0.8	5.9	8.3
Օգոստոս	0.8	6.1	8.3
Սեպտեմբեր	0.9	6.1	8.7
Հոկտեմբեր	1.2	6.2	
Նոյեմբեր	1.4	6.6	
Դեկտեմբեր	2.2	6.2	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2022 թ. սեպտեմբերը 2021 թ. սեպտեմբերի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ, այդ թվում՝	**8.3**	
Հաց ցորենի՝ բարձր տեսակի	20.7	0.89
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	23.9	0.74
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	48.7	0.48
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	6.1	0.36
Պանիր կովի կաթից	49.9	0.32
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ	21.4	0.31
Պանիր տնական	31.3	0.17
Ալյուր ցորենի՝ բարձր տեսակի	32.7	0.17
Մածուն	4.6	0.16
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	15.9	0.15
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար	10.5	0.15
Լավաշ	25.2	0.15
Թթվասեր	27.1	0.13
Բուսական այլ յուղ կամ ճարպ «Ռեդի»	20.1	0.13
Օճառահեղուկ (շամպուն)	14.3	0.11

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2022 թ. հունվար – օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվար - օգոստոսը 2021 թ. հունվար - օգոստոսի նկատմամբ (%)	2022 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվար - սեպտեմբերը 2021 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	2923.3	152.9	3509.4	163.8
Ներմուծում *(ՍԻՖ)*	4900.0	158.2	5797.2	161.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1976.7	166.8	2287.8	158.4

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2021 թվական					
	սեպտեմբեր			հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	84883	34411	50472	633479	288406	345073
ԱՄՆ	51904	14467	37438	416631	138419	278212
Ուկրաինա	1714	2053	-340	13228	13584	-356
Ղազախստան	10304	797	9507	66799	4445	62354
Գերմանիա	6089	3536	2553	51081	23498	27583
Իսպանիա	1080	1319	-239	10845	11913	-1068
Ֆրանսիա	4915	1860	3056	43652	13585	30067
ԱՄԷ	2115	4072	-1957	17496	22663	-5167
Չինաստան	332	6935	-6603	1835	54106	-52271
Թուրքիա	140	461	-321	1235	4146	-2911
Այլ երկրներ	33223	32906	318	280526	291828	-11302
Ընդամենը	**196699**	**102816**	**93883**	**1536806**	**866594**	**670212**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2022 թվական					
	սեպտեմբեր			հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	416052	38135	377916	2317623	309637	2007986
ԱՄՆ	58828	36214	22614	492604	210249	282355
Ուկրաինա	75	1718	-1644	3796	17579	-13784
Ղազախստան	2897	1581	1316	37795	6146	31649
Գերմանիա	5475	10826	-5350	54322	76838	-22517
Իսպանիա	1125	8261	-7137	11981	36619	-24638
Ֆրանսիա	4188	6937	-2749	43366	33888	9478
ԱՄԷ	3065	16479	-13414	25259	156500	-131241
Չինաստան	220	8481	-8261	2657	62120	-59463
Թուրքիա	133	1006	-872	1209	7419	-6210
Այլ երկրներ	59494	112889	-53395	471007	830077	-359070
Ընդամենը	**551552**	**242528**	**309024**	**3461617**	**1747072**	**1714546**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2021 թվական					
	սեպտեմբեր			հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	41458	16782	24676	322346	147382	174964
ԱՄՆ	25344	7060	18284	212482	70747	141735
Ուկրաինա	837	1002	-166	6749	6932	-182
Ղազախստան	5023	389	4635	33980	2260	31720
Գերմանիա	2978	1720	1258	26161	12015	14146
Իսպանիա	528	643	-115	5550	6076	-526
Ֆրանսիա	2395	908	1487	22345	6960	15384
ԱՄԷ	1031	1983	-952	8885	11568	-2683
Չինաստան	162	3383	-3221	932	27579	-26647
Թուրքիա	68	225	-156	633	2109	-1476
